# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<<14>> [illegible] 2012թ. N 31

ք. Արմավիր

### ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թվականի մայիսի 6-ի ՆՀ- 728 հրամանագրի 1.15 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի մարտի 21-ի թիվ 19-Ա հանձնարարագրի համաձայն նախարարության աշխատակազմի ֆինանսական վերահսկողության տեսչության աշխատակիցների կողմից ստուգման արդյունքում 2012 թվականի ապրիլի 28-ի 19-Ա ակտով արձանագրված խախտումները՝ <<Արաքս>>, <<Արմավիր>>, <<Մերձափնյա>>, <<Շենիկ>> ջրօգտագործողների ընկերությունների կողմից սպասարկվող և 2011թվականի հունիսի 5-ի կարկտահարված համայնքներում բերքի կորուստ ունեցած հողի սեփականատերերի փաստացի վնասված հողատարածքների և կնքված ջրօգտագործման պայմանագրերում նշված հողատարածքների համադրման և ճշգրտման նպատակով.

Կարգադրում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին /Դ. Սամսոնյան/՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքները ավարտել 15-օրյա ժամկետում և արդյունքների մասին պարբերաբար զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ – տնտեսական զարգացման վարչությանը /Վ. Մկրտչյան/ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի
2012 թվականի մայիսի 24-ի
N31 կարգադրության

# ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

| | |
|---|---|
| Դ.Սամսոնյան | Հայաստանի հանրապետության Արմավիրի Մարզպետի տեղակալ |
| *Անդամներ՝* | |
| Ա.Այվազյան | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ |
| Մ. Սարիբեկյան | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ |
| Գ.Մելիքյան | - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ |
| Հ.Հարությունյան | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության, ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ф.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ